

# Ե Ր Կ Ո Ւ Ա Ռ Ա Ս Պ Ե Լ

Ա.

Երազիս մէջ տեսայ Սէլմա Լակէրլօֆը, առասպելներու գեղեցիկ թագուհին:

Երիտասարդ, բարձրահասակ, խարտեաշ մազերով, հիւսիսային աղջիկ էր: Մինչ կը քալէ վեր ու վար դասարանին մէջ, ես կը դիտեմ իր մարմինը... զարմանալի՛ բան, այս երիտասարդ աղջիկն է ուրեմն այնքան խորունկ բաներու սիրտը:

Բայց խնդիրը այստեղ չէ: Խնդիրը այնտեղ է որ Օրիորդ Սէլմա չէր ուզած ծաղիկը նուիրել դպրոցի երիտասարդ սպասուհիին:

Եւ ահա, խորհրդաւոր ծաղիկը դրած անտեսանելի բաժակի մէջ, մեզի կը բացատրէ — իր շուրջ բոլորուած աշակերտներուն — թէ ինչո՛ւ չէ ուզած նուիրել ծաղիկը դպրոցի երիտասարդ սպասուհիին:

Ինչպէս՝ յանախ՝ երազի մէջ, տարտամ է ամէն ինչ, ես որոշ չեմ լսեր իր բառերը. մանաւանդ դեռ տարուած եմ դիտելով իր շքեղ գեղեցկութիւնը... Ըսես անբնական ըլլար՝ այնքան խորունկ հոգի, այդքան գրաւիչ մարմնի մէջ:

Բայց որոշ էր՝ որ ծաղիկը անսովոր ծաղիկ էր. Ոչ ջուրի մէջ, ոչ արեւի տակ պէտք էր խնամել զայն: Այս ծաղիկը սովորութիւն ունէր լալու եւ իր արցունքներով կը սնանէր... ո՞վ պիտի կարենար մշակել զայն:

Ես մատս վերցուցի եւ կ'ուզէի ըսել, թէ սպասուհին, որ արցունքներով խնդրած էր ունենալ ծաղիկը, անշուշտ տեղեակ էր զաղտնիքին եւ պիտի կարենար մշակել զայն:

Բայց զանգը տուին եւ աշակերտները ելան. դասը աւարտած էր: Արթնցայ:

Հիմա կը մտածեմ այս տարօրինակ երազին վրայ, եւ առասպելը չէ աւարտած:

Որովհետեւ Օրիորդ Սէլմա իրաւացի էր: Ամէ՛ն մարդ կրնայ խնամել երկրի ծաղիկները: Բայց այն ծաղիկը որ դրուած էր անտեսանելի բաժակի մէջ, Օրիորդ Սէլմա պէտք չէ որ յանձնէր երիտասարդ սպասուհիին:

Բ.

Խու՛մբ մը մարդիկ կ'ըսէին վերջին խօսքերը:

Որովհետեւ Մահը, անդունդին վրայ, ժայռի մը նստած, անհամբեր կը սպասէր:

Խու՛մբ մը մարդիկ, որ բարձր ճակատներ ունէին, կ'ըսէին իրենց վերջին խօսքերը:

Մէկը յորդառատ արցունքներ կը նուրէր: Մէկը կը հանէր իր մատանին եւ կը զրկէր հեռաւոր սիրելիին: Մէկ ուրիշը, անձկազին մատներով, կը գրէր փոքրիկներուն...

Եւ Մահը, անդալար ժայռին նստած, անհամբեր, կը սպասէր:

Դո՛ւն չհանեցիր մատէղ կապոյտ մատանիդ: Դուն տարիք մէկ բոպէ ձեռքդ ծոցիդ... եւ շարժումը մնաց անաւարտ: Դուն բառ չարտասանեցիր:

Ես կը ճանչնամ այդ թախծալի աչքերը եւ գիտեմ՝ ինչ որ անցաւ այդ ազնուական ճակատին տակ:

Մահը, հրակէզ ժայռին նստած, անհամբեր, կը սպասէր:

Եւ հերոսական լութեան մէջ անցնող կեանք մը... անցաւ հերոսական Լութեան մէջ:

Աստղե՛րը կը հսկեն անձանօթ շիրիմի մը վրայ:

Փարիզ ՌԱՅԱԷԼ ԶԱՐԴԱՐԵԱՆ